ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԳՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-18/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստ

Գ. Կարմիրգյուղ, Գ. Նժդեհի 4 **«10» «08» 2018թ.**
ժ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ա. Գասպարյան,
Հանձնաժողովի անդամներ Գ. Ենգոյան, Ն. Հովհաննիսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Մկրտչյան

1. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված մասնակցի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությանը, ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի համաձայն մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում է իրականությանը համապատասխանող:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետի դրույթներով՝ և հիմք ընդունելով <<Շինպլյուս>> ՍՊԸ-ի՝ ներկայացրած հրավերով սահմանված որակավորման չափորոշիչները հիմնավորող փաստաթղթերը՝

- <<Շինպլյուս>>ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց

Հաշվի առնելով այն հանգամանքը , որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկից ավելի մասնակից, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ սահմանելով սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու գործընթաց սկսել սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից՝ 16.08.2018թ. հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին, գ. Կարմիրգյուղ, գ. Նժդեհ 4՝ համայնքապետարանի վարչական շենք հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ _____ Ա. Գասպարյան

Անդամներ՝ _____ Գ. Ենգոյան

_____ Ն. Հովհաննիսյան

Քարտուղար՝ _____ Ռ. Մկրտչյան